ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԼԵՎՈՆ ՓԻՐՈՒԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ակադեմիկոս Լևոն Փիրուզյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ. 62 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՎՈՆ ՓԻՐՈՒԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լևոն Փիրուզյանը ծնվել է 1937թ. Մոսկվայում: 1961թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: 1964թ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտում:

1965թ. եղել է լաբորատորիայի, այնուհետև՝ բժշկական կենսաֆիզիկայի բաժնի վարիչ:

1972-1984թթ. եղել է քիմիական միացությունների կենսաբանական փորձարկումների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն: 1980թ. եղել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ:

Լևոն Փիրուզյանի գիտական աշխատանքները հիմնականում վերաբերում են օրգանիզմում ախտաբանական պրոցեսների առաջացման, դրանց զարգացման և վերացման հարցերի, կենսաբանական օբյեկտների վրա արտաքին ֆիզիկական և քիմիական գործոնների ազդեցության մոլեկուլային և բջջային մեխանիզմների ուսումնասիրությանը:

Լևոն Փիրուզյանը եղել է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, ԽՍՀՄ բժշկական արդյունաբերության նախարարության կոլեգիայի անդամ, ՌԴ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, աստղագնացության միջազգային ակադեմիայի անդամ:

Ակադեմիկոս Լևոն Փիրուզյանին շնորհվել է ԽՍՀՄ պետական մրցանակ, նա պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (1975թ.), Հոկտեմբերյան հեղափոխության (1981թ.), Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 2-րդ աստիճանի (2008թ.), Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 3-րդ աստիճանի (2002թ.), Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 4-րդ աստիճանի (1997թ.) շքանշաններով:

Լևոն Փիրուզյանը մահացել է 2013թ.:

Լևոն Փիրուզյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ. 62 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանի և ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով Լևոն Փիրուզյանի ավանդը դեղաբանության և բժշկական կենսաֆիզիկայի բնագավառներում և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՎՈՆ ՓԻՐՈՒԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լևոն Փիրուզյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՎՈՆ ՓԻՐՈՒԶՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լևոն Փիրուզյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ